

Օ Տ Ա Կ Ա Ն

Վազարշապատից դէպի հիւսիս, եօթը վերստ
հեռաւորութեան վրա, բարձրագիր, բարքարոս ժայ-
ռերի ծոցում, կանաչազարդ այգիների մէջ թագւած է
պատմական հինաւուրց Օշականը:

Օշականը սեպհականութիւն դարձաւ Ամառու-
նեաց Վահանի շշիանի, որը բաշխեց նրան Ցրդատ թագա-
ւորի որդի Խոսրով Աշը Վահանի պատերազմական յաղ-
թութիւնների համար, որ նա տարաւ Մագրթաց Սա-
նեսան թագաւորի վրա, ագատելով Հայաստանը վե-
րահաս վտանգից:

Ներկայումս Օշականը էջմիածնապատկան գիւղե-
րից մինն է: Օշականի ճանապարհը քարքարոս տու-
պալըներից է կազմւած և էջմիածնից մինչև Խաթու-
նարխ հայաբնակ գիւղը հարթ հաւասար ճանապարհ է
ներկայացնում բայց սկսած Արդար-Դաւթի քեալաֆէ-
քից (աւերած եկեղեցի) ճանապարհը մինչև Օշական
քարակոյտերի միջով անցնելով՝ շարունակ բարձրա-
նում է, երբ ձեր առաջ բացըում է սարահարթ, որից
յետոյ երեսում է Օշականը Մինչև Խրիմեան Հայրիկ,
կարելի էր գնալ Օշական միմիայն թամքած ձիով կամ
ոտով: Խրիմեան Հայրիկը այդ գժւարութիւնը վերաց-
նելու համար հրամայեց շինել կառքերի համար խճուղի:

Երբ հասնում էր այն սարահարթի գլուխը, ուր
ձեր առաջ երեսում է Օշականը, դուք պէտք է ամենայն
զգուշութեամբ ցած գաք Խրամ կոչւած ձորով, որ
մտնէք գիւղը: Զարմանալի գիրք ունի Օշականը:

Գիւղը մտնելուց յետոյ, նորից պէտք է ոլորապտոյտ
ճանապարհներով բարձրանաք և հիւսիս արևմտեան
կողմով իջնէք գիւղի մէջ:

Քասախ գետը, որ հոսում է խոր ձորի միջով
գիւղը երկու մասի է բաժանում:

Այդպէս բլուրների լանջերի վրա ընկած Օշա-
կանը ունի մօտ 350 տուն հայ բնակիչ, որոնք պարա-
պում են այգեգործութեամբ և երկրագործութեամբ:
Աշխատութիւնը բնակիչների մեծագոյն մասի ան-
բաժան ընկերն է: Ունի ծխական երկան դպրոց,
բայց համատարած տղիտութիւնը գեռ թագաւորում է:
Ան այդ անշուք, բայց զուս հայաբնակ գիւղումն է
այժմ հանգչում մեզանից 1500 տարի առաջ հայերէնի
այրութեանը հնարող մեծ Մհերոպի աճիւնը:

Գերեզմանը բոլորավին անշքացել էր, երբ ազգիս
մեծագործ Գէորգ Խաթուղիկոսը 1879 թւին վերա-
նորոգեց եկեղեցին և հրամայեց գերեզմանը կարգի-
բերել:

Այդ նւիրական գերեզմանը շրջակայ հայ գիւ-
ղերի, ինչպէս և բոլորիս համար, ուխտաեղի է, որ
ամեն մի այցելու հայի սրտում զարթեցնում է մեր
նախնական անցիւալ փառքի յիշուտակները:

Ա. ԲՈՒՆԵԱԹԵԱՆՑ

